11) ապահովել յուրաքանչյուր անձի անվտանգությունը և անդորրը կենդանու ազդեցությունից, այդ թվում՝ շներին առանց դնչկալի կամ վնասագերծման ապահովման դուրս չհանել,

12) պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տիրապետողի համար սահմանված նորմերը և կանոնները:

3. Կենդանիների հաշվառումը

5. Կենդանիների հաշվառումն իրականացվում է մարդկանց և կենդանիների համար հատկապես վտանգավոր և վարակիչ հիվանդությունների հայտնաբերման, վարակված կենդանիների հայտնաբերման ու պրոֆիլակտիկայի ենթարկելու նպատակով:

6. Կենդանիները հաշվառման են ենթակա սկսած վեց ամսական հասակից:

7. Հաշվառման ենթակա չեն մանր կենդանիներն ու թռչունները, որոնք պահվում են դեկորատիվ նպատակով:

8. Հաշվառումն իրականացնում է համայնքի ղեկավարը՝ կենդանիների քանակի և բնակավայրի կառավարման մեծարժեքի օրգանիզմի տեղեկությունների հավաքագրման

միջոցով բնակչության իրավունքների և շահերի հաշվառմամբ, կենդանիների պահման համար համալիր միջոցառումների պլանավորման և կատարման նպատակով:

9. Կենդանիների հաշվառումն իրականացվում է դրանց ձեռքբերման կամ Կապան քաղաքի տարածք ներմուծման պահից 15-օրյա ժամկետում:

10. Հաշվառման արդյունքում տիրապետողին տրվում է գրանցման վկայական և նույնականացման համար: Հաշվառման մասին նշում է կատարվում կենդանիների հաշվառման գրքում:

11. Կենդանու նույնականացման համարը նշվում է կենդանու վզնոցի վրա:

12. Կենդանու հաշվառման ժամանակ տիրապետողը պարտադիր պետք է ծանուցվի կանոնների մասին, ինչը հավաստվում է տիրապետողի ստորագրությամբ: Տիրապետողն իրավունք ունի հաշվառող մարմնից անվճար տեղեկություններ ստանալ այն վայրերի մասին, որտեղ ինքն իրավունք ունի կազմակերպել կենդանու զբոսանքը կամ արոտը, ինչպես նաև այն վայրերի մասին, որտեղ թույլատրված է կենդանիների թաղումը:

13. Կենդանու մահվան կամ սպանդի դեպքում կենդանու տիրապետողը պարտավոր է հաշվառող մարմնին հանձնել գրանցման վկայականը, ինչի մասին նշում է կատարվում գրանցման գրքում:

14. Կենդանուն այլ անձի տիրապետությանը հանձնելու դեպքում կենդանու հետագա վերահաշվառում իրականացնելու համար նոր տիրապետողին են հանձնվում կենդանուն նույնականացնող համարի նշումով կենդանու վզնոցը և գրանցման վկայականը:

15. Գրանցման գրքույկում նշվում են հետևյալ տեղեկությունները՝

- 1) գրառման հերթական համարը և հաշվառման տարեթիվը,
- 2) տիրապետողի անունը, ազգանունը, բնակության վայրը, անձնագրի տվյալները,
- 3) կենդանու տեսակը, անունը, սեռը, գույնը, ցեղատեսակը, ծննդյան թիվը (եթե հայտնի է),
- 4) գրանցման վկայականի տրամադրման ամսաթիվը և հերթական համարը,
- 5) կենդանու նույնականացման համարը,
- 6) տիրապետողի մոտ գտնվող կենդանիների թվաքանակը,

16. Գրանցման վկայականի կորստյան դեպքում տիրապետողի դիմումի հիման վրա նրան տրվում է գրանցման նոր վկայական:

4. Կենդանիներին պահելու, զբոսանքի իրականացման և վաճառքի պայմանները

17. Ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են կենդանիներին պահելիս հաշվի առնել այդ կենդանիների կենսաբանական և անհատական առանձնահատկությունները, պահպանել օրենսդրությունը, ինչպես նաև այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

18. Բնակելի շենքերում կենդանիներ մշտապես կամ ժամանակավորապես պահելիս պետք է ապահովվեն մարդկանց և կենդանիների կյանքի բարենպաստ պայմանները:

19. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքներում կենդանիներ պահելն արգելվում է:

20. Կենդանիների զբոսանքը թույլատրվում է միայն այդ նպատակով հատկացված տարածքներում: Նման տարածքների բացակայության դեպքում զբոսանքը կարող է կատարվել միայն այնպիսի տարածքներում, որտեղ կա հատկապես նշանակված տարածքներ, բազառությամբ կրթական,

մշակութային, սպորտային, առողջապահական կազմակերպություններին (հիմնարկներին) հարող տարածքների, մանկական հրապարակների և շուկաների տարածքների:

21. Շների զբոսանքն իրականացնելու ժամանակ տիրապետողը պետք է ապահովի շրջապատող անձանց անվտանգությունը:

22. Շների զբոսանքի ժամանակ տիրապետողը պարտավոր է՝

1) շանը տարածքից դուրս բերել կամ ներս տանել կապով, որի երկարությունը թույլ է տալիս հսկել շան վարքը: Մարդկանց և ուրիշի կենդանիներին սպառնացող շները (մարտական, ծառայողական, պարեկային և այլ ցեղատեսակի շներ, որոնք կարող են լինել ագրեսիվ և վտանգավոր մարդու կամ այլ կենդանու կյանքի կամ առողջության համար, այսուհետ՝ ագրեսիվ շուն) պետք է ունենան դնչկալներ:

2) մայթերով շարժման ժամանակ, հետիոտնի ճանապարհին, մարդաշատ վայրերում և երթևեկության հատման մասերում ագրեսիվ շանը պահել դնչկալով:

23. Ճանապարհը կամ երթևեկելի մասն անցնելիս, ինչպես նաև մայրուղիների մոտ՝ ճանապարհային պատահարների կանխման նպատակով, տիրապետողը պարտավոր է կենդանուն պահել կարճ կապի վրա:

24. Տիրապետողները պարտավոր են թույլ չտալ մայթերի կամ այլ հանրային օգտագործման տարածքների աղտոտումը կենդանու զբոսանքի ընթացքում, ինչպես նաև պարտավոր են մաքրել դրանց կենսագործունեության արդյունքները:

25. Շներ տիրապետողները իրավունք ունեն դրանց ազատ արձակել միայն սեփականության, տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող հատուկ առանձնացված իրենց պատկանող տարածքներում կամ մեկուսացման շինություններում:

26. Հասարակական վայրերում (խանութների հարևանությամբ, այգիներում, կայարաններում, գյուղատնտեսական արտադրանքի և սպառողական ապրանքների շուկաներում, տոնավաճառներում և այլն) կենդանիների վաճառքն արգելվում է:

27. Տիրապետողներն իրավունք ունեն կենդանիներին տեղափոխել քաղաքային տրանսպորտով: Շները պետք է քաղաքային տրանսպորտով փոխադրվեն կարճ կապով և դնչկալով, բացառությամբ փոքր դեկորատիվ ցեղատեսակների և փոքր առանց ցեղատեսակի շների, որոնք տեղափոխվում են պայուսակներում կամ տեղափոխման համար հարմարեցված սարքերում:

28. Արգելվում է՝

1) կենդանուն գրգռել մարդկանց և կենդանիների դեմ,

2) կոիվների կամ ներկայացումների համար կենդանիների օգտագործումը, որոնց արդյունքում կենդանին կարող է տանջվել, ցավեցվել, վնասվել կամ սպանվել,

3) կենդանիների երկարատև կամ մշտապես պահումը տրանսպորտային միջոցում,

4) անհամատեղելի տեսակների միևնույն տարածքում կամ միևնույն տարածքում միևնույն տեսակների բնակեցումը, որոնց միջև կարող է առաջանալ ագրեսիվություն,

5) հարբած անձանց և 14 տարին չլրացած անչափահասներին 15 կիլոգրամից ավելի քաշ ունեցող շներին զբոսանքի տանելը,

6) կենդանիների հետ խանութներ, հանրային սննդի և կենցաղային ծախսարարությունների օբյեկտներ, ուժղավայրեր, կրթական և մշակութային

հաստատություններ այցելելը, բացառությամբ ցուցադրության կամ համանման այլ միջոցառումների այցելության դեպքերի:

5. Կենդանիների դիերի թաղումը և թափոնումը

29. Տիրապետողները իրավունք ունեն թաղելու և թափոնելու իրենց պատկանող կենդանիների դիերը:

30. Կենդանիների դիերի թաղումն իրականացվում է այդ նպատակով Կապան համայնքի ղեկավարի կողմից առանձնացված վայրերում՝ սահմանված սանիտարահիգիենիկ կանոններին համապատասխան:

6. Գյուղատնտեսական տնային կենդանիներ պահելու առանձնահատկությունները

31. Գյուղատնտեսական տնային կենդանիներ պահելու վերաբերյալ սույն կանոնների դրույթները տարածվում են այնքանով, որքանով չեն հակասում սույն գլխի դրույթներին:

32. Կենդանիների զբոսանքը կամ արոտը կարող է կազմակերպվել տիրապետող անձի հսկողության ներքո՝ միայն դրա համար նախատեսված վայրերում:

33. Արգելվում է կենդանու ազատ կամ կապված արոտը դրա համար չնախատեսված վայրերում (փողոց, զբոսայգի, պուրակ, տնամերձ տարածք և այլն):

34. Տիրապետողները պարտավոր են հիվանդությունների կանխման նպատակով ապահովել համապատասխան անասնաբուժական միջոցառումների իրականացումը, թույլ չտալ շրջակա միջավայրի աղտոտումը կենդանիների կենսագործունեության արդյունքներում:

7. Կանոնները խախտելու պատասխանատվությունը

35. Սույն կանոնների խախտումն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվություն:

8. Անցումային դրույթներ

36. Տիրապետողները պարտավոր են հաշվառել իրենց տիրապետության ներքո գտնվող կենդանիներին՝ Կանոններն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 8-Ն

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկլարավելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.4-րդ կետով՝ **Կապանի համայնքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը, բացառությամբ տեղական տուրքերի կամ վճարների այն տեսակների, որոնց թույլտվությունների տրամադրման կարգը սահմանված է օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ(19)՝

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՅԱՆ

ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ


ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ


ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ


ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ


(Handwritten signatures in blue ink over horizontal lines)


ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ
ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ











Դեմ (0)
Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2024թ. փետրվարի 14
ք. Կապան







ԿԱՐԳ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԿԱՊԱՆ ԿԱՄԱՅՆՔՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ**

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Այունիքի մարզի Կապան համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված հեղուկ վառելիքի վաճառքի, սեղմված բնական գազի վաճառքի, հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի, խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու, ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի, «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման, առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24:00-ից հետո աշխատելու, հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման, արտաքին գովազդ տեղադրելու, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, համայնքների կամ համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու, մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու, քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման, «Առևտրի և ծառայությունների

անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 01-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 01-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվությունների (այսուհետ՝ թույլտվություն) տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Թույլտվությունը տրամադրվում է իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին (այսուհետ՝ դիմումատու) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ղեկավարի կողմից՝ սույն կարգի ձև N 1-ին համապատասխան:

3. Թույլտվություն ստանալու համար դիմումատուն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ղեկավարին ներկայացնում է դիմում՝ էլեկտրոնային (Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի միջոցով, ուղարկողի հաստատված ստորագրությամբ կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ) կամ թղթային եղանակով, որին կից ներկայացվում են՝

1) անձը հաստատող փաստաթղթի՝ դիմումատուի անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,

2) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական ռեգիստրի գրանցման քաղվածքը,

3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու որոշմամբ սահմանած դրույքաչափերին համապատասխան՝ տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը,

4) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի նկատմամբ դիմումատուի պարտավորությունների բացակայության վերաբերյալ տեղեկանքը,

4. Դիմումը էլեկտրոնային եղանակով ներկայացվելու դեպքում կից փաստաթղթերը ներկայացվում են սկանավորված տարբերակով:

5. Հեղուկ վառելիքի, սեղմված բնական գազի, հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվություն ստանալու համար սույն կարգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերին կից ներակայացվում է նաև.

1) Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված և լիազոր մարմնի կողմից հաշվառված կազմակերպության կողմից տրամադրված արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացության պատճենը:

6. «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվություն ստանալու համար, սույն կարգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերին կից ներկայացվում է նաև.

1) առևտրային գործունեություն ծավալելու համար նախատեսված տարածքի լուսանկարը,

2) էսքիզային առաջարկ (ծաղիկների, տնկիների, ամանորյա տոնակատարությունների համար նախատեսված եղևնիների և սոճիների, պաղպաղակի, ջրի, այդ թվում՝ հանքային, հյութերի և զովացուցիչ ըմպելիքների

բացօթյա վաճառք իրականացնելու համար նախատեսված տակդիր տեղադրելու դեպքում):

7. Արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն ստանալու համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, սույն կարգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերին կից ներկայացվում է նաև.

1) համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի միջոցի էսքիզը, որտեղ նշվում են գովազդի արտաքին չափերը, գովազդի տեղադրման ձևը (վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պլակատներ և այլն) և տեխնիկական լուծումները, իսկ դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդի դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համաձայնությունը:

8. Քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվություն ստանալու համար սույն կարգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերին կից ներկայացվում է նաև.

1) բժշկի որակավորում ունեցող աշխատակցի աշխատանքային պայմանագրի կամ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքում գործող բժշկական հաստատության հետ կնքված համապատասխան պայմանագրի պատճենը:

9. Համայնքի տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվություն ստանալու համար սույն կարգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերին կից ներկայացվում է նաև.

1) մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի և ներդիրի պատճենը,

2) ավտոմոբիլի տեխնիկական անձնագրի (հաշվառման վկայագրի) պատճենը,

3) հայտատուին պատկանող մարդատար-տաքսու ծառայություն իրականացնող ավտոմեքենաների ցանկը:

10. Հայաստանի հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի կամ դրա կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվություն ստանալու համար սույն կարգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերին կից ներկայացվում է նաև.

1) ապրանքային նշանի վկայագրի պատճենը՝ համայնքի կամ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշանում օգտագործելու դեպքում:

11. Հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 01-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 01-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվություն ստանալու համար սույն կարգի 3-

1) Տվյալ օրյեկտում հանրային սննդի կազմակերպման ու իրականացման թույլտվության պատճենը:

12. Հաստատված թույլտվությունը (ձև N 1) հայտատուին է հանձնվում Հայտը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, որը տրվում է հայտատուի կողմից ընթացիկ տարվա՝ հայտում նշված ժամանակահատվածին և վճարված տեղական տուրքին համապատասխան:

13. Թույլտվությունը չի կարող դիմումատուի կողմից փոխանցվել այլ անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի կամ օգտագործվել այլ անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի կողմից:

14. Թույլտվություն ստանալու մասին դիմումը մերժվում է հայտի մուտքագրման օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, եթե

1) դիմումատուի կողմից սույն կարգին համաձայն ներկայացված փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված (այդ թվում՝ տեղական տուրքի գումարը վճարվել է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու որոշմամբ սահմանված դրույքաչափից պակաս) և դրա մասին դիմումատուին տեղեկացնելու օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս կողմից դրանք չեն համալրվել,

15. Հայտը մերժելու դեպքում տեղական տուրքի վճարված գումարը վերադարձվում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի համաձայն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 9-Ա

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
 ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 142-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածով, և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 142-Ա որոշման 1-ին կետի 18)-րդ ենթակետով հաստատված N 18 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

«II Մասնագիտական /մանկավարժական/ անձնակազմ տողում՝

«33 125730 4149090» թվերը համապատասխանաբար փոխարինել « 35 125730 4400550» թվերով,

«Ընդամենը» տողում՝

«41,5 5225730» թվերը համապատասխանաբար փոխարինել « 43,5 5477190» թվերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ(19)՝

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ

ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԺԵԼԱ ԱԼԵԿՍԱՆՅԱՆ

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ
ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ













Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2024թ. փետրվարի 14

ք. Կապան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 10-Ա

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թ.

«ԿԱՊԱՆԻ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՑՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ, 28-րդ կետերով, 81-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Ստեղծել «ԿԱՊԱՆԻ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴՊՐՈՑ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2. Հաստատել «ԿԱՊԱՆԻ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴՊՐՈՑ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

3. Հաստատել «ԿԱՊԱՆԻ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴՊՐՈՑ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն թիվ 2 հավելվածի:

4. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «ԿԱՊԱՆԻ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴՊՐՈՑ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

5. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ(19)՝

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ













ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՅԱՆ

ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ
ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Դեմ (0)
Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՆ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2024թ. փետրվարի 14
ք. Կապան





Հավելված N 1
ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու

2023թ. Փետրվարի 14-ի N 10-Ա որոշման

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ

ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԿՈՂՄԻՏ «--» ----- 2024թ.

գրանցման թիվը՝

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

Սյունիքի մարզի Կապան

համայնքի ավագանու

14.02.2024թ. թիվ --Ա որոշմամբ

Կազմված է ____թ. և բաղկացած է __ թերթից

Տպագրված է ընդամենը __ օրինակ

ՕՐԻՆԱԿ _____

«---» ----- 2024թ.

Կապանի համայնքի ղեկավար՝

_____ Գ.Փարսյան

«ԿԱՊԱՆԻ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴՊՐՈՑ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, Ք. ԿԱՊԱՆ

2024թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Կապանի բռնցքամարտի մասնագիտացված դպրոց» ՀՈԱԿ-Ը՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն /այսուհետ՝ Հաստատություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, կրթադաստիարակչական ծրագրեր իրականացնող ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Հաստատությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 14-ի թիվ ---Ա որոշմամբ:

3. Հաստատության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքն է (այսուհետ՝ Հիմնադիր), որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ղեկավարը:

4. Հաստատության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան Ա. Մանուկյան փ. 1-ին նրբ.1/2, փոստային դասիչ՝ 3308 :

5. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Հաստատության անվանումն է՝

1) հայերեն՝ «Կապանի բռնցքամարտի մասնագիտացված դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

2) ռուսերեն՝ «Капанская специализированная школа бокса» муниципальная некоммерческая организация

3) անգլերեն՝ «Kapan Boxing Specialized School» community non-commercial organization

7. Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

8. Հաստատությունը կարող է ունենալ պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են Հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները: Վերոնշյալ տեղեկատվությունը կարող է հրապարակվել նաև հիմնադրի պաշտոնական կայքէջում՝ <http://www.kapan.am>:

9. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

10. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

11. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

12. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2.1 Հաստատության գործունեության առարկան և նպատակը համապատասխան ուսումնական ծրագրերի պահանջների իրականացումն է, սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելը, նրանց հոգևոր, ստեղծագործական ունակությունների գեղագիտական, ֆիզիկական զարգացումը, ռազմահայրենասիրական դաստիարակությունը:

2.2 Հաստատությունը ապահովում է դպրոցականների նախասիրությունների, ունակությունների զարգացումը, երեխաների առողջության պահպանումն ու ամրապնդումը, վարքի շեղումների կանխարգելումը:

2.3 Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության և մարդասիրության, հանրամատչելիության, ազգային ու համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

2.4 Հաստատության նպատակն է՝

ա) մինչև 18 տարեկան մանուկների և պատանիների բազմակողմանի զարգացման, առողջ կենսակերպի, ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու համար ապահովել պայմաններ:

բ) մասնագիտական կողմնորոշման համար ստեղծել նպաստավոր պայմաններ.

գ) ամրապնդել ու խորացնել դպրոցում ստացած գիտելիքները, ամրապնդել սովորողների տեսական գիտելիքների և գործնական ունակությունների փոխադարձ կապը, զարգացնել նրանց կարողություններն ու հմտությունները

դ) համակողմանիորեն և ներդաշնակ զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումը:

2.5 Իր առջև դրված խնդիրների արդյունավետ իրականացման համար Հաստատությունը՝

- Համագործակցում է արտասահմանյան երկրների առաջատար կրթական կազմակերպությունների և կրթական ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների հետ

- Իր կողմից կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի հիման վրա իրականացնում է երկկողմանի ու բազմակողմանի կապեր հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների, հիմնարկների, այլ կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ.

- Պայմանագրային հիմունքներով ներգրավում է այլ կազմակերպությունների կամ անհատների.

- Կատարում է տարատեսակ աշխատանքներ կադրերի պատրաստման, մասնագետների փոխանակման և այլ բնագավառներում.:

2.6 Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

ա) լրացուցիչ կրթադաստիարակչական ծրագրերի իրականացում.

բ) 18 տարին լրացած անձանց համար Հաստատության կողմից վճարովի մարզումների կազմակերպում.

գ) ուսումնամարզական հավաքների կազմակերպում

ե) Հաստատության լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Հաստատությունը իր ուղղությանը համապատասխան իրականացնում է կրթադաստիարակչական ծրագրեր: Ըստ կրթադաստիարակչական ծրագրերի բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց է:

3.2 Հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են առանձին մարզաձևերի ուսումնական ծրագրերի պահանջներին և ժամանակացույցին համապատասխան:

3.3 Հաստատությունը մշակում է գործունեության իր ծրագրերը՝ հաշվի առնելով սաների հետաքրքրություններն ու հակումները, ընտանիքի և կրթական համակարգի պահանջները:

3.4 Սաներն ընդգրկվում են Հաստատության նույն կամ տարբեր տարիքի մարզական խմբերում:

3.5 Հաստատությունը գործում է ամբողջ տարվա ընթացքում: Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից:

4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1 Հաստատության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, գործադիր մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է օրենքով սահմանված կարգով:

4.2 Հաստատության կրթադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մարզամանկավարժական խորհուրդ: Մարզամանկավարժական խորհուրդն իր լիազորության սահմաններում քննարկում և առաջարկություններ է ներկայացնում՝

- Հաստատության կանոնադրության վերաբերյալ,
- Հաստատության գործունեության հիմնական ուղղությունների և կրթական ծրագրերի, առաջադրված խնդիրների իրականացման ձևերի ու միջոցների վերաբերյալ,
- Ուսումնական պլանների ու ծրագրերի վերաբերյալ՝ ելնելով հաստատության հիմնական խնդիրներից, նպատակներից, կադրային և նյութական հնարավորություններից, սաների ու նրանց ծնողների հետաքրքրություններից,
- Լրացուցիչ կրթական ծրագրերի և առաջավոր փորձի տարածման վերաբերյալ,
- Մարզամանկավարժական աշխատողների որակավորման բարձրացման և խրախուսման վերաբերյալ:

Հաստատության մարզամանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են մանկավարժական աշխատողները: Մարզամանկավարժական խորհրդի կազմում կարող են ընդգրկվել նաև հիմնադրի և ծնողական խորհրդի ներկայացուցիչներ:

Մարզամանկավարժական խորհրդի նիստերը նախագահում է Հաստատության տնօրենը:

4.3 Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4.4 Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

- ա) համայնքի ավագանու համաձայնությամբ հաստատության հիմնադրումը,
- բ) Հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
- գ) Հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,
- դ) Հաստատության վերակազմակերպումը և լուծարումը,
- ե) Հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և/կամ ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,
- զ) Հաստատության կառավարման համակարգի սահմանումը,
- է) Հաստատության վերակազմակերպումը և լուծարումը,
- ը) Հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,
- թ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

4.5 Հիմնադիրն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

4.6 Հիմնադիրը՝

- 1) Հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
- 2) Վերահսկողություն է իրականացնում Հաստատության գործունեության նկատմամբ.
- 3) Կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները:
- 4) Լսում է Հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.
- 5) Վերահսկողություն է իրականացնում Հաստատությանը ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.
- 6) Վերահսկողություն է իրականացնում Հաստատության սեփականության պահպանությամբ նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ Հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.
- 7) Հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը
- 8) Իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և Հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ.

4.7 Հաստատության տնօրենն (այսուհետ՝ Տնօրեն) իրականացնում է Հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, համայնքի ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների այլ իրական ակտերի, հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի՝ պահանջները կատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

4.8 Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս Հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ.

2) նախագահում է Հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է Հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) աշխատանքի նշանակում ու աշխատանքից ազատում է Հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսական միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) սահմանում է Հաստատության կառուցվածքը, կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

8) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերակսկում դրանց կատարումը.

9) իրականացում է մանկավարժական կադրերի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

10) վերահսկողությունն է իրականացնում Հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

11) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

12) կազմում է Հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

13) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և Հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ.

4.9 Տնօրենի բացակայության դեպքում, լիազորված մարմնի գլխավոր որոշման համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

4.10 Հաստատության տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքի գծով տեղակալը

1) պատասխանատու է Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի իրականացման, դասավանդման որակի և

2) վերահսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սաների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնավորում սաների ուսումնական ծանրաբեռվածությունը

3) Հաստատությունում կազմակերպում է մեթոդական աշխատանք, կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակ և ուսումնադաստիարակչական աշխատանքի մասին հաշվետվություններ.

4) ընդհանրացնում և տարածում է լավագույն մարզիչների աշխատանքի դրական փորձը, մարզիչներին հաղորդակից է դարձնում գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին.

4.11 Հաստատության տնօրենի տնտեսական աշխատանքի գծով տեղակալը պատասխանատու է հաստատության շենքի և գույքի պահպանման, ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման, հաստատության սանիտարահիգիենիկ ու բարեկարգ վիճակի, հաստատության ուսումնական պարապմունքներին՝ մարզադահլիճների և մարզագույքի ժամանակի նախապատրաստման, հակահրդեհային պաշտպանության և սպասարկող անձնակազմի աշխատանքների կազմակերպման համար.

Միջոցներ է ձեռնարկում Հաստատության ուսումնանյութական բազան հարստացնելու և ամրապնդելու համար:

4.12 Մարզիչ- մանկավարժն իրականացնում է՝

- Ուսումնամարզական գործընթացի կազմակերպում, համաձայն ուսումնական ծրագրերի

- Պատասխանատվություն է կրում մարզական գործընթացի անվտանգության ապահովման, պարապողների կողմից տարատեսակ խթանիչների ընդունման դեպքերի բացառման համար և այլ.

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Հաստատության սեփականությունը ձևավորվում է Հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

5.2 Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

5.3 Հիմնադիրը՝ սեփականության իրավունքով Հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ, բացառությամբ Հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

5.4 Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է Հաստատությունը:

5.5 Հաստատության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

5.6 Հիմնադիրն իրավունք ունի վերցնելու իր կողմից Հաստատությանը ամրացված

5.7 Հաստատությունը իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

Հաստատությունը իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի համաձայնությամբ հանձնելու վարձակալության: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել 1 տարուց ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում ստացված եկամուտները Հաստատության սեփականությունն են՝ բացառությամբ ամրացված գույքի վարձակալությունից գոյացած վճարների, որոնք սահմանված կարգով ուղղվում են Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի քաղաքային համայնքի բյուջե: Հաստատությանը ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

5.8 Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

5.9 Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի քաղաքային համայնքի բյուջեով նախատեսված միջոցների հաշվին / համայնքի կարիքների համար ծառայությունների մատուցում, աշխատանքների կատարում, ապրանքների մատակարարում/, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

5.10 Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) Հիմնադրի սահմանված կարգով վճարովի կրթադաստիարակչական ծառայությունների մատուցումից ստացված միջոցները

2) բարեգործական, նպաստային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և Հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները.

5.11 Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի / վերստուգման/ հիմնադրի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

5.12 Հաստատությունը շահույթը նպատակաուղղում է իր կանոնադրական խնդիրների իրականացմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, աշխատողների սոցիալական հարցերի բարելավմանը:

5.13 Հաստատությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող / ոչ առևտրային/ կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

6.1 Հաստատության կրթադաստարակչական գործընթացի մասնակիցները որպես կանոն մինչև 18 տարեկան սաներն են, ծնողները /օրինական ներկայացուցիչները/, մանկավարժական աշխատողները:

6.2 Երեխաների ընդունելության ժամանակ Հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողների (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել Հաստատության կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են մարզադպրոցի գործունեությունը: Երեխաների իրավունքները և պարտականությունները սահմանվում են համապատասխան պայմանագրային հիմունքերով ու Հաստատության ներքին կարգապահական կանոններով:

6.3 Սաների ծնողների (օրինական ներկայացուցիչների) իրավունքների ու պարտականությունները կարգավորվում են Հաստատության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

6.4 Հաստատության անձնակազմի համալրման կարգը կանոնակարգվում է նրա կանոնադրությամբ

6.5 Մարզչա-մանկավարժական աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր, ըստ մասնագիտության, ունեն անհրաժեշտ մասնագիտական – մանկավարժական որակավորում:

6.6 Հաստատության մարզիչ-մանկավարժն իրավունք ունի մասնակցելու Հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

6.7 Հաստատության մարզչա-մանկավարժական և մյուս աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան, Հաստատության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

6.8 Հաստատության մարզիչ- մանկավարժները պարտավոր են ապահովել կրթադաստիարակչական ծրագրերի կատարումը:

6.9 Հաստատությունում արգելվում է սաների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:

6.10 Սանը պարտավոր է

- Բարեխղճորեն սովորել
- Խնամքով վերաբերվել Հաստատության գույքին
- Հարգել Հաստատության սաների և աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը
- Պահպանել Հաստատության ներքին կարգապահական կանոնները

6.11 Հաստատության երեխաների իրավունքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, Հաստատության կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԱԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

7.1 Հաստատությունը կազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

7.2 Հաստատության լուծարման դեպքում Հաստատության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի քաղաքային համայնքի բյուջե:



<< Կապանի բռնցքամարտի մասնագիտացված դպրոց >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության
 աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Միավորը	Դրույքաչափը	Աշխատավարձի ֆոնդ
I	Վարչարնությունական անձնակազմ՝			
1	Տնօրեն	1	212040	212040
2	Գործավար	1	115280*	115280
3	Բուժքույր	1	115280*	115280
4	Տնտեսավար	1	115280*	115280
5	Հավաքարար	1	115280*	115280
6	Պահակ	1	115280*	230560
Ընդամենը		6		903720
II	Մասնագիտական /մանկավարժական/ անձնակազմ՝	4	125730	502920
10	Մարզիչ-մանկավարժ		115280	
11	Մարզիչ-մանկավարժ 1-ին կարգ		138490	
12	Մարզիչ-մանկավարժ 2-րդ կարգ		123420	
ԸՆԴԱՄԵՆԸ		10		1406640

Ծանոթություն՝ * -ով նշված դրույքաչափերը սահմանված են 01.01.1974 թ-ից հետո ծնվածների համար,
 իսկ մինչև 1974թ ծնվածների համար հաշվարկել 108020 դրամ դրույքաչափով:

Աշխատակազմի քարտուղար *Ջ. Աբրահամյան* Նելլի Շահնազարյան

Հավելված 3

Կապան համայնքի ավանդանոս
14 փետրվարի 2024թ. թիվ 10 Ա հրոշման



Կապանի բռնցքամարտի մասնագիտացված դպրոց ՀՈԱԿ-ին հանձնվող գույքի ցանկ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավորի արժեքը ՀՀ դրամ	Ընդամենը ՀՀ դրամ
1	Կախիչ	հատ	1	0.01	0.01
2	Գրապահարան	հատ	1	0.01	0.01
3	Պրոցեսոր	հատ	1	0.01	0.01
4	Մոնիտոր	հատ	1	0.01	0.01
5	Համակարգչային սեղան	հատ	1	0.01	0.01
6	Աթոռ	հատ	1	0.01	0.01
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԺԵԸԸ					0.06

Աշխատակազմի քարտուղար *Ս. Շահնազարյան* Սելի Շահնազարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 11-Ա
14 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՇԿԵՐՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.2-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**


1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Շիշկերտ բնակավայրի վարչական ղեկավարի լիազորություններից բխող գործառույթների իրականացումը վերապահել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Ծավ բնակավայրի վարչական ղեկավար Արմեն Արտավազդի Ալեքսանյանին:


2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
Կողմ (19)


- ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ
- ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ
- ԳՈՌԹԱԴԵՎՈՍՅԱՆ
- ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՅԱՆ
- ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ
- ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
- ԱՆԺԵԼԱ ԱԼԵԿՍԱՆՅԱՆ
- ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
- ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
- ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
- ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ
- ԱԼԵԿՍԱՆԴԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ




ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՅ
ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ









Դեմ (0)
Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2024թ. փետրվարի 14
ք. Կապան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 12-Ա

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ՝ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 21 ՇԵՆՔԻ ԹԻՎ 22 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ) ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ Կապան համայնքի Կապան քաղաքի Ս. Շահումյան փողոցի թիվ 21 շենքի թիվ 22 բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 16012024-09-0004) անհատույց (սվիրատվության կարգով), որպես ընդհանուր բաժնային սեփականություն օտարել

Մասիս Լենդրոշի Ավանեսյանին /ծնվ. 01.08.1970թ., նույն. քարտ 008725178, տրված 22.06.2016թ. 041-ից/

Օֆելյա Սլավիկի Ավանեսյանին /ծնվ. 21.09.1974թ., նույն. քարտ 008725186, տրված 22.06.2016թ. 041-ից/

Մերի Մասիսի Ավանեսյանին /ծնվ. 06.10.1994թ., անձն. AU 0239022, տրված 20.04.2021թ. 041-ից/:

2. Առաջարկել 'սվիրատուներին' ապահովել սեփականության իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ գործառույթների և դրանց հետ կապված ծախսերի կատարումը:


3. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:


Կողմ(19)

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ
ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ
ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ
ՎՈՒԿԱՆ ԴԱԶԱՐՅԱՆ

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ
ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ










Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2024թ. փետրվարի 14
ք. Կապան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 13-Ա
14 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թ.

